ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

ՄԱՐԻՆԵ ԿԱՐԵՆԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի բակալավրական կրթության 1-ին կուրսի ուսանողուհի
E-mail: marinka.hovhannisyan777@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.2.65-106

Ղեկավար՝ արվ. թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ Լուսինե Զավենի Սահակյան

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Լուսինե Զավենի Սահակյանի՝ 12.10.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 20.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.10.2023 թ.

ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՎԱՉԵ ՇԱՐԱՖՅԱՆԻ «ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿԱՄ «ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ» ԲԱԼԵՏԻ ՇՈՒՐՋ

Ամփոփում
Հայ երաժշտության պատմության մեջ բալետի ժանրը կարևոր տեղ է գրավում: Սկզբնավորվելով Արամ Խաչատրյանի արվեստում, բալետն իր բազմազան դրսևորումներն է ունեցել ազգային կոմպոզիտորական դպրոցի ականավոր ներկայացուցիչների ստեղծագործություններում: Հեղինակն անդրադարձել է Վաչե Շարաֆյանի «Ձգողականություն» բալետին: Հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ականավոր ներկայացուցիչ Շարաֆյանի երաժշտական ժառանգությունն ընդգրկում է սիմֆոնիկ, երգչախմբային, կամերային-գործիքային բազմաոճ ստեղծագործություններ: Կոմպոզիտորի արվեստում կարևոր տեղ են գրավում երաժշտաբեմական ժանրերը՝ խորեոգրաֆիայի նոր միջոցների կիրառմամբ: Հոդվածի շրջանակներում, հակիրճ ներկայացնելով Վ. Շարաֆյանի ստեղծագործական դիմանկարը, առավել մանրամասն կանգ ենք առել, Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի հիման վրա նրա հեղինակած «Ձգողականություն» բալետի ստեղծման պատմության, երաժշտալեզվական որոշ առանձնահատկությունների վրա: Բալետում ոչ միայն կարևոր է երաժշտական նյութի մեջ ավանդականի և արդիականի սինթեզը, այլև դասական բալետի և ժամանակակից խորեոգրաֆիայի անսպասելի համադրումները: Երաժշտաբեմական հետաքրքիր լուծումների միջոցով, բալետի հերոսների ապրումները դրամատիզմացվում և հոգեբանականացվում են: Երաժշտական լեզվի մեջ հեղինակն օգտագործում է ժամանակակից կոմպոզիտորական հնարներ: Սույն հոդվածում մեջբերել ենք «Ձգողականություն» բալետի շուրջ Վ. Շարաֆյանի հետ ունեցած անձնական զրույցից որոշ մտքեր և տեղեկություններ, որոնք արձանագրվում են առաջին անգամ:
Բանալի-բառեր. Վաչե Շարաֆյան, բալետ, ժամանակակից երաժշտություն, Լևոն Շանթ, դրամա, խորեոգրաֆիա:

Abstract
Studied at the Music Theory Department of Yerevan State Conservatory after Komitas ***Marine Karen Hovhannisyan. - «"Some observations on Vache Sharafyan's Ballet "Divinity" or "Ancient Gods"».***
The genre of ballet holds an important place in the history of Armenian music. Starting with Aram Khachaturian's work, ballet has had diverse manifestations in the compositions of prominent representatives of the national composition school. The author focuses on Vache Sharafyan's ballet "Gravitation". A prominent figure of contemporary Armenian composer art, Sharafyan's musical legacy spans symphonic, choral, and chamber-instrumental works in various styles. Musical-theatrical genres play a significant role in his work, incorporating new methods of choreography. This article provides a brief overview of Sharafyan's creative profile and delves deeper into the history of the creation of his ballet "Gravitation", based on Levon Shant's drama "Ancient Gods", as well as highlighting certain features of its musical language. The ballet is distinguished not only by the synthesis of traditional and contemporary elements in its musical material but also by the unexpected combination of classical ballet and modem choreography. Through interesting musical-theatrical solutions, the emotions of the ballet's characters are dramatized and psychologically deepened. The composer employs modem compositional techniques in the musical language. In this article, some thoughts and insights from a personal conversation with Vache Sharafyan regarding the ballet "Gravitation" are also presented, which are documented for the first time.
Key Words: *Vache Sharafyan, ballet, contemporary music, Levon Shunt, drama, choreography.*

Կոմպոզիտորական արվեստ

Абстракт

Студентка 1-го курса бакалавриата музыковедческого отделения Ереванской государственной консерватории им. Комитаса ***Марине Кареновна Оганесян. - "Некоторые особенности балета Баче Шарафяна «Гравитация» или «Старые боги».***

Жанр балета занимает важное место в истории армянской музыки. Начиная с творчества Арама Хачатуряна, балет имел различные проявления в творчестве выдающихся представителей национальной композиторской школы. Автор статьи обратилась к балету Баче Шарафяна «Гравитация». Музыкальное наследие Шарафяна, выдающегося представителя современного армянского композиторского искусства, включает симфонические, хоровые, камерно-инструментальные разностилевые произведения. В творчестве композитора важное место занимают жанры музыкального театра с использованием новых средств хореографии. В рамках статьи, кратко представляя творческий портрет Шарафяна, мы остановились подробнее на истории создания, а также на некоторых музыкально-лингвистических особенностях его балета «Гравитация» по драме Левона Шанта «Старые боги». В балете важен не только синтез традиционного и современного в музыкальном материале, но и неожиданные сопоставления классического балета и современной хореографии. Через интересные музыкальные решения драматизируются и психологизируются чувства героев балета. Автор использует современные композиционные приемы в музыкальном языке. Некоторые мысли и информация из личных бесед с Шарафяном публикуются впервые.

Ключевые слова: *Баче Шарафян, балет, современная музыка, Левон Шант, драматургия, хореография.*

Բալետի ժանրը համաշխարհային երաժշտության պատմության մեջ ունեցել է ձևավորման և զարգացման իր շրջափուլերը:

Հայ իրականության մեջ առաջին բալետային պարտիտուրն ստեղծվել է Արամ Խաչատրյանի կողմից, ում ծննդյան 120-ամյակը տարաբնույթ մշակութային միջոցառումներով և գիտաժողովներով նշում ենք այս տարի: Այս ժանրն սկզբնավորվելով Արամ Խաչատրյանի արվեստում՝ իր ցայտուն դրսևորումներն է ունեցել Գրիգոր Եղիազարյանի, Էդգար Հովհաննիսյանի, Ավետ Տերտերյանի երաժշտական ժառանգության մեջ: Արդի կոմպոզիտորական արվեստում նույնպես բալետի ժանրը չի դադարում լինել այժմեական: Ավելին, հայ ժամանակակից կոմպոզիտորները, հավատարիմ մնալով նախորդ ստեղծագործողների լավագույն ավանդույթներին, ինչպես նաև կիրառելով ժամանակակից խորեոգրաֆիայի նորահունչ միտումները, շարունակում են ստեղծագործել երաժշտաբեմական ժանրերում (Տիգրան Մանսուրյան՝ «Զյունե թագուհին», Արամ Սաթյան՝ «Լիլիթ», Երվանդ Երկանյան՝ «Օրեսթեոս», «Էդիպ արքա», Էդուարդ Հայրապետյան՝ «Ցանկության տրամվայ», «Կախարդական վզնոց», Ջենիի Ասատրյան՝ «Քաջ Նազար», Արմենուհի Կարապետյան՝ «Ոսկեմազիկ», «Սուտլիկ որսկանը», Արամ Հովհաննիսյան՝ «Սիրամարգի պոչը»):

Սույն զեկույցի թեման դիտարկումներ են Վաչե Շարաֆյանի «Զգողականություն» կամ «Հին աստվածներ» երկու գործողությամբ բալետի շուրջ: Վաչե Շարաֆյանը հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի վառ ներկայացուցիչներից է, ավելի քան 100 ստեղծագործության հեղինակ, այդ թվում՝ սիմֆոնիկ, կամերային գործիքային, վոկալ, երգչախմբային ստեղծագործություններ, 2 օպերա, 3 բալետ, կինոերաժշտություն: Կոմպոզիտորի ստեղծագործությունները հնչում են ոչ միայն Հայաստանում, այլև համաշխարհային բեմերում, երաժշտական փառատոների շրջանակում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, մինչև Ասիա, Իտալիա, Ֆրանսիա, Հունաստան, Չինաստան և Ճապոնիա: Նրա ստեղծագործությունները կատարել են այնպիսի ականավոր երաժիշտներ ինչպիսիք են՝ Յո-Յո Ման, (Sun wine wind of time for duduk,violin, cello, piano), Յուրի Բաշմետը (Կոնցերտ ալտի, դուդուկի, բարիտոնի համար), Հիլիարդ բրիտանական անսամբլը, Դրեզդենի (Surgite Gloria for viola, tenor and duduk), Բոստոնի, Սիցիլիայի սիմֆոնիկ նվագախմբերը:

Ծանոթացնելով իր աշխատանքային պրոցեսին կոմպոզիտորը նշում է.

«Կան կոմպոզիտորներ, ովքեր աշխատելու ժամանակ ունենում են բազմաթիվ պարտիտուրներ իրենց կողքին, և լսում են գործեր, ես այդ կոմպոզիտորների թվին չեմ պատկանում: Ես շատ քիչ եմ նվագում աշխատելու ժամանակ, լսում եմ ինքս ինձ և չեմ ունենում իմ կողքին ուրիշ նոտաներ, բացի Բախից, որը ես միշտ սիրում եմ նվագել» (1.):

Բալետային ժանրը կարևոր տեղ է գրավում Վաչե Շարաֆյանի ժառանգության մեջ: Կոմպոզիտորը 3 բալետի հեղինակ է «Երկրորդ Լուսին», որը նվիրված է կոմպոզիտոր, միստիկ, փիլիսոփա Գեորգի Գյուրջիևին, «Հին աստվածները»՝ ըստ Լևոն Շանթի համանուն դրամայի, և «Անապատի Հարսը»՝ ըստ բանաստեղծուհի Սոնա Վանի համանուն պոեմի: Կոմպոզիտորի խոսքերով, իր մեջ ցանկություն առաջացավ բալետային ժանրին դիմելու չեխ խորեոգրաֆ Իրժի Կիլյանի բեմադրությունները դիտելուց հետո:

«Հին աստվածներ» բալետը գրվել է 2018 թվականին, բալետի ստեղծմանը վերջնականապես նպաստեց մի պատահական զանգ, որը կոմպոզիտորը ստացավ ամերիկաբնակ մի տիկնոջ՝ Կատյա Քուշերեանի կողմից, ով ոչ միայն նպաստեց, այլև դարձավ բալետի աշխատանքների աջակիցը:

Ինչպես վերը նշեցինք, բալետի հիմքում Լևոն Շանթի «Հին աստվածները» դրաման է, որտեղ տեղի է ունենում երկու տարբեր աշխարհների, կերպարների բախում՝ հոգևորի և աշխարհիկի: Դրամայի հերոս վանահայրը ճշմարիտ հավատքի և հոգևորի կրողն է, որին հակադրվում է աբեղան, ով զգայականի և երկրայինի կրողն է: Ստեղծագործության մեջ նկարագրվում է, թե աբեղայի բարդ հոգեկան աշխարհը, երկընտրանքի առաջ լինելու իրավիճակը, և թե այս երկու աշխարհների բախումը: «Մի՞տք թե՞ սիրտ, լո՞յս թե՞ խավար, այս ընտրության մեջ մարդ հաճախ ընկնում է ծայրահեղության մեջ՝ չտեսնելով, որ Աստծո ստեղծած բնությունը հենց հակադրությունների միասնությունն է» (1.): Սյուժետային այս գիծը

հիանալի կերպով իր դրսևորումն է գտել բալետի պարտիտուրում, որտեղ հոգեբանական խոր ու բազմաշերտ ապրումները հնարավորին բացահայտվում են երաժշտության միջոցով:

Վաչե Շարաֆյանը 1992-1996 թվականներին դասավանդել է Երուսաղեմի Հայոց ժառանգավորաց ճեմարանում, և հոգևոր աշխարհին ներսից ծանոթ լինելը նրան օգնել է բալետում կերպարների առավել ամբողջական ու ճշգրիտ բացահայտմանը:

Բալետն ունի երկու տարբերակ՝ սցենարային և բեմական: Առաջինի հեղինակը բանաստեղծ, թարգմանիչ Հակոբ Մովսեսն է, բեմադրության հեղինակը՝ պարուսույց Վիլեն Գալստյանը: Անձնական զրույցի ընթացքում, կոմպոզիտորը պատմում է, որ բալետի բեմադրության համար գրեթե ամեն ինչ պատրաստ էր, երբ սկսվեց համավարակը, այնուհետև վրա հասավ պատերազմը… Առաջնախաղը հետաձգվեց: Երկրորդ անգամ արդեն աշխատանքները վերսկսվում են դիրիժոր Կարեն Դուրգարյանի հետ, ում առաջարկով լիբրետտոն գրում է դերասանուհի Նարինե Գրիգորյանը, բալետմայստերը Արա Ասատուրյանն էր, բեմադրող նկարիչը՝ Վիկտորիա Ռիեդոն: Պրեմիերան տեղի ունեցավ 2022 թվականի դեկտեմբերի 1-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոնում և հանդիսատեսի կողմից արժանացավ ջերմ գնահատականի: Ինչպես կոմպոզիտորն է նշում,- «բեմում վերջնական արդյունքը բավականին գրավիչ էր, անսովոր, թարմ և կլանող»:

«Զգողականություն» բալետը կոմպոզիտորը ամբողջացրել է մեկ տարվա ընթացքում: Այն իրենից ներկայացնում է մի քանի արվեստների զուգորդում, բայց երաժշտության առաջատար դերով, երաժշտությունն է բովանդակային հենքը, սյուժետային գծի հիմնական առաջատար ուժը: Շարաֆյանը նշում է, որ հաճախ կոմպոզիտորի և բեմադրողի պատկերացումները կարող են տարբեր լինել, սակայն հավելում է, որ երկու դեպքում էլ երաժշտությունն ասես դառնում է և՛ կոմպոզիտորի, և՛ բեմադրողի պատկերացումների ներհույս դրսևորում:

«Հին Աստվածներ» բալետն իր բնույթով բավական դրամատիկ է, բայց հագեցած է նաև նուրբ քնարական հատվածներով ու վառ պարային համարներով, ուր համադրվում են մեծ և փոքր տեսարանները: Պարային ցայտուն տեսարանները, որտեղ կոմպոզիտորի վկայությամբ. համադրվում են մեծ և փոքր քայլերը, ներդաշնակորեն համադրված են մեղեդային տարբեր գծեր: Խորեոգրաֆիան կառուցված է և՛ դասական, և՛ ժամանակակից հնարքների կիրառմամբ: Երաժշտությունը ևս հանդես է գալիս նորովի, ժամանակակից երաժշտական լեզվի և ժողովրդական երգամտածողության հետաքրքիր համադրմամբ: Բալետի երաժշտության մեջ տոնալ և ատոնալ սահմանագծերը հարթված են, դրանք հանդես են գալիս մի ներդաշնակության մեջ: Երաժշտությունը միախառնվում է մնջախաղի ու մարմնի պլաստիկայի հետ: Կոմպոզիտորական բոլոր հնարքները միտված են գեղարվեստական կերպար ստեղծելուն, հերոսների հոգեբանական ապրումների բացահայտմանը:

Բալետի մի քանի համարում («Հակադրություն», «Զգողականություն. Դեպի բնություն»), որպես վիզուալ արտահայտչամիջոց, կիրառվել է նաև տեսաէկրան, որն ուղեկցվում է երաժշտությամբ և պարով:

Բալետի 2-րդ գործողության վերջին հատվածը հունական դրամա է հիշեցնում: Բալետ է ներմուծվում մարդկային խոսքը՝ բանաստեղծական ներդաշնակ վանկաչափությամբ: Դերասանուհի Նարինե Գրիգորյանի կողմից հնչում է «Հին աստվածներ» դրամայից «Իջեք, իջեք երազներ» հատվածը, որն առանձնահատուկ արտահայտչականություն է տալիս ներկայացմանը:

Մեծ բարեբախտություն է, որ հնարավորություն ունեցանք՝ և՛ նյութի մեջ ավելի խորանալու ընթացքում, և՛ կունենանք, անձամբ առնչվելու Վաչե Շարաֆյանի հետ: Բարեկիրթ կոմպոզիտորն իր բարդ աշխատանքային պրոցեսի մասին խոսում է համեստ ու հասանելի, ասես տարածություն թողնելով նաև երաժշտագիտական խորհրդածությունների համար:

Մենք համամիտ ենք այն կարծիքին որ Շարաֆյանը բալետային ժանրում (իսկ ավելի խորը ուսումնասիրության արդյունքում՝ նաև մյուս ժանրերում) մելոդիստ է: Կոմպոզիտորն ինքն էլ ասում է, որ հաճախ են իրեն «մելոդիստ» անվանում, ժամանակակից երաժշտության մեջ մեղեդիներ ստեղծող, բայց հավելում է. «առհասարակ բալետային ժանրում, մելոդիստ լինելուց բացի, անհրաժեշտ է ունենալ ռիթմի, շարժման, թատրոնի, մարմնի շարժման երաժշտականության զգացողություն…» (1.):

Թվարկված բոլոր բաղադրիչները, առկա են «Հին Աստվածներ» բալետում, որը մեր առջև բացեց կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի ստեղծագործական զարդատուփի առաջին դուռը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կոմպոզիտորի հետ մեր զրույցներից:
From our conversations with the composer.

REFERENCES

1. Kompozitori het mer zmytzneritz.

Հեղինակի մասին. *ՄԱՐԻՆԵ ԿԱՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ծ.22.08 2004, ք. Երևան) 2019-ից -2023 թթ. ուսանել և գերազանցությամբ ավարտել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի Երաժշտության տեսության բաժին: 2023 թվականից սովորում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժնում: Զեկուցումներով հանդես է եկել Երաժշտական քոլեջների և ԵՊԿ ՈՒԳՍՀ-ի գիտաժողովներին, ներկայացնելով զեկույցներ համաշխարհային և հայ կոմպոզիտորական արվեստի շուրջ («Բեթհովենի թատերական երաժշտությունը», «Օտտորինո Ռեսպիգիի Հռոմի սոճիներ սիմֆոնիկ պոեմը», «Էրիկ Սատիի Մեսսան»): Վարել է ներբուհական հաշվետու համերգներ: 2023 թվականի, դեկտեմբերի 12-ի «Երաժիշտ» ամսաթերթում հրապարակվել է ԵՊԿ- ի 2023 թվականի հաշվետու համերգին նվիրված հոդվածը:*

About the author: *MARINE KAREN HOVHANNISYAN (born on August 22, 2004, in Yerevan) studied at the Music Theory Department of Yerevan R. Melikyan Music College from 2019 to 2023, graduating with honors. Since 2023, she has been studying at the Musicology Department of Yerevan Komitas State Conservatory. She has presented at conferences of music colleges and YSC's Undergraduate and Graduate Student Conferences, focusing on world and Armenian compositional art (such as "Beethoven's Theatrical Music", "Ottorino Respighi's Symphonic Poem The Pines of Rome, "Erik Satie's Messe"). She has also conducted intra-university reporting concerts. An article dedicated to the YSC's 2023 reporting concert was published in the December 12, 2023 issue of the magazine "Musician".*

Off автоpe: *МАРИНЕ КАРЕНОВНА ОГАНЕСЯН (род. 22 августа 2004, Ереван). Окончила с отличием отделение теории музыки Ереванского музыкального колледжа имени Р. Меликяна (2019-2023). С 2023 года учится на музыковедческом факультете Ереванской государственной консерватории имени Комитаса. Выступала с докладами на студенческих конференциях музыкальных колледжей и ЕТК с докладами о мировом и армянском композиторском искусстве («Театральная музыка Бетховена», «Симфоническая поэма «Римские сосны» Отторино Респиги», «Месса Эрика Сати»), Проводила внутривузовские отчетные концерты. 12 декабря 2023 года в газете «Музыкант» была опубликована статья, посвященная отчетному концерту ЕТК в 2023 году.*